ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՓԵՏՐՎԱՐ 2004)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
«ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի
«Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է
մակրոտնտեսական, հարկաբյուջետային, դրամավարկային,
ինչպես նաև ՀՀ վճարահաշվարկային, բանկային համակարգի
հիմնական ցուցանիշների և տնտեսական նորմատիվների
վերաբերյալ տեղեկատվություն:
Մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ
տեղեկատվության աղբյուրը
ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է,
իսկ հարկաբյուջետային, դրամավարկային և բանկային
վիճակագրության տվյալների աղբյուրը՝
ՀՀ կենտրոնական բանկը:
Դրամավարկային և բանկային վիճակագրությունում ընդգրկված է
ՀՀ միջազգային պահուստների, փողի ագրեգատների,
ֆինանսական շուկայի և փոխարժեքների վերաբերյալ
տեղեկատվություն:

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ
տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է.

http:// www.CBA.am

Տնտեսական աճ: 2004 թ. հունվար-փետրվարին տնտեսական աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 7.4%: ՀՆԱ աճը հիմնականում պայմանավորվել է զուտ անուղղակի հարկերի (ազդեցությունը ՀՆԱ աճի վրա կազմել է 4.2 տոկոսային կետ), ծառայությունների (3.7) և գյուղատնտեսության (0.6) աճով: ՀՆԱ դեֆլյատորը 2004 թ. հունվար-փետրվարին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 111.9%՝ պայմանավորված հիմնականում արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսի փոփոխություններով (130.8%):

Սղաճ: Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2004 թ. փետրվարին գրանցվել է սպառողական գների ընդհանուր մակարդակի 0.6% նվազում, ինչը պայմանավորվել է պարենային ապրանքների՝ հիմնականում «Բանջարեղեն և կարտոֆիլ» (4.2%), «Միրգ» (10.0%) և «Ձու» (8.4%) ապրանքախմբերի գների նվազմամբ, որոնք համապատասխանաբար ապահովել են գնանկման 0.3, 0.3 և 0.2 տոկոսային կետերը:

2003 թ. դեկտեմբերի համեմատությամբ սպառողական գների աճը կազմել է 1.9%: Ընդ որում, սեզոնային ապրանքների գների փոփոխությունն ապահովել է սղաճի 1.34 տոկոսային կետը, բնականոն սղաճը՝ 0.58 տոկոսային կետը, իսկ պետության կողմից կարգավորվող ծառայությունների սակագները սղաճի վրա չեն ազդել:

Նախորդ տարվա դեկտեմբերի համեմատությամբ պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների ինդեքսը կազմել է 102.8%, ոչ պարենային ապրանքների գներինը՝ 100.2%, իսկ ծառայությունների սակագները մնացել են անփոփոխ:

2004 թ. հունվար-փետրվարին, 2003 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, սպառողական գների ինդեքսը կազմել է 107.0%, իսկ փետրվարին, 2003 թ. նույն ամսվա համեմատությամբ՝ 107.7%:

Արտաքին հատված: 2004 թ. հունվար-փետրվարին ապրանքների արտահանումը (FOB գներով) կազմել է 84.8 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ նվազելով 1.0%-ով: Դա պայմանավորվել է այն հանգամանքով, որ թեև 24.2%-ով նվազել են արտահանման մեջ շուրջ 43.9% կազմող «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալները, սակայն մնացած ապրանքախմբերի գծով հիմնականում նկատվել է աճի միտում: Մասնավորապես, «Հանքահումքային արտադրանք» (50.8%-ով), «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» (68.7%-ով) և «Մանածագործական իրեր» (92.6%-ով) ապրանքախմբերի ցուցանիշների զգալի աճ է գրանցվել, որը կազմում է արտահանման ծավալների համապատասխանաբար 12.9%, 10.7% և 7.8%-ը:

Ներմուծումը (CIF գներով) կազմել է 164.6 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ նվազելով 2.3%-ով՝ պայմանավորված հիմնականում «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբերի ներմուծման ծավալների համապատասխանաբար 21.9% և 20.5%-ով նվազմամբ, որոնք կազմել են ներմուծման համապատասխանաբար 21.7% և 15.4%-ը: Աճել են «Բուսական ծագման արտադրանք» (66.7%-ով) և «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» (33.7%-ով) ապրանքախմբերի ներմուծման ծավալները՝ կազմելով ներմուծման համապատասխանաբար 10.0% և 5.6%-ը:

Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի ցուցանիշները հաշվի առնելու՝ արտահանումն աճել է 30.4%-ով, իսկ ներմուծումը՝ 5.0%-ով:

2004 թ. հունվար-փետրվարին առևտրային հաշվեկշռի պակասուրդը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, նվազել է 3.7%-ով (առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» հոդվածի ցուցանիշի՝ 5.7%-ով) և կազմել 79.9 մլն ԱՄՆ դոլար:

2004 թ. հունվար-փետրվարին ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին անվանական հաշվարկային փոխարժեքը կազմել է 566.4 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ արժեքավորվելով 3.1%-ով: Փետրվարին ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը կազմել է 564.4 դրամ՝ նախորդ ամսվա համեմատությամբ արժեքավորվելով մոտ 0.3%-ով: 2004 թ. հունվար-փետրվարին եվրոյի նկատ-

մամբ ՀՀ դրամի միջին անվանական հաշվարկային փոխարժեքը կազմել է 715 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ արժեզրկվելով 14.3%-ով: Փետրվարին եվրոյի միջին փոխարժեքը կազմել է 713.1 դրամ՝ նախորդ ամսվա համեմատությամբ արժեքավորվելով մոտ 0.6%-ով:

Պետական հատված: Փետրվարին արձանագրվել է պետական բյուջեի փաստացի եկամուտների գերակատարում ծրագրված մակարդակների համեմատությամբ: Բյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները կազմել են 18.4 մլրդ դրամ՝ ծրագրային ցուցանիշը գերազանցելով 1.7 մլրդ դրամով, ընդ որում, հարկային եկամուտները կազմել են 18.1 մլրդ դրամ (ծրագրված 16.2 մլրդ դրամի փոխարեն), իսկ ոչ հարկային և կապիտալ եկամուտները՝ 0.3 մլրդ դրամ (ծրագրված 0.5 մլրդ դրամի փոխարեն): Ամսվա հարկային եկամուտների միջին օրական մուտքերը կազմել են 0.9 մլն դրամ՝ պահպանելով հունվարին արձանագրված մակարդակը և նախորդ տարվա փետրվարի 0.6 մլն դրամի փոխարեն:

Տարեսկզբից շարունակվել է հարկերի համաչափ հավաքագրման՝ նախորդ տարվա ընթացքում արձանագրված միտումը: Այսպես, ամսվա վերջին օրը հավաքագրված հարկերը կազմել են ամսվա հարկերի 15.1%-ը՝ հունվարի 7.2%-ի փոխարեն:

Բյուջեի ծախսերը փետրվարին կազմել են 17.6 մլրդ դրամ՝ ծրագրով նախատեսված 17.9 մլրդ դրամի փոխարեն: Արդյունքում հավելուրդը կազմել է 0.9 մլրդ դրամ, որն ամսվա ընթացքում ձևավորվել է արժեթղթերի տեղաբաշխումից ստացված զուտ մուտքերի (0.9 մլրդ դրամ), արտաքին վարկի մարման (0.5 մլրդ դրամ) և միասնական հաշվի ավելացման (0.7 մլրդ դրամ) հաշվին:

ՀՀ կենտրոնական բանկի նկատմամբ ՀՀ կառավարության պարտավորություններն ամսվա ընթացքում նվազել են մոտ 0.7 մլրդ դրամով և կազմել -41.4 մլրդ դրամ:

Դրամավարկային քաղաքականություն: Հունվարին, փողի պահանջարկի անկման դրսևորումներով պայմանավորված, փողի առաջարկի մեծածավալ կրճատումից հետո, փետրվարին ՀՀ ԿԲ-ն ծրագրել էր փողի բազայի կառավարման առավել հարթ՝ ընդամենը 2%-ով ընդլայնման սցենար, ինչի արդյունքում ամսվա վերջին կապահովվեր 105.1 մլրդ դրամ մակարդակ: Փետրվարին ևս, իրացվելիության ավելցուկի բարձր մակարդակի պահպանման ակնկալիքներից ելնելով, սպասվում էր բանկերի կողմից ԿԲ-ում ավանդների ներդրման ակտիվ նախաձեռնություն, ինչպես նաև ԿԲ արժեթղթերի պորտֆելում առկա 1.0 մլրդ դրամի սահմաններում հակադարձ-ռեպո համաձայնագրերի վերակնքում:

Փետրվարի փաստացի արդյունքներով արձանագրվել է փողի առաջարկի կառավարման նախատեսված սցենարից զգալի շեղում, որն արտահայտվել է փողի բազայի՝ 2% աճի փոխարեն 3% նվազմամբ: Այսինքն, ձևավորվել է փողի բազայի 100.0 մլրդ դրամ մակարդակ, որն ավելի քան 3.3 մլրդ դրամով ցածր է տատանումների թույլատրելի միջակայքի ստորին սահմանից: Ծրագրված սցենարից շեղումը պայմանավորվել է ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկի նկատմամբ պահանջարկի՝ ակնկալվող աճից զգալի ցածր տեմպերի ձևավորմամբ, որը տեղի է ունեցել այդ ժամանակահատվածում գրանցված ցածր տնտեսական աճի ազդեցությամբ: Միաժամանակ կրճատվել է նաև կանխիկ դրամի առաջարկը՝ ի հաշիվ բյուջետային ծախսումների մեջ կանխիկ ծախսերի տեսակարար կշռի՝ տարեսկզբից դիտված նվազման: Արդյունքում՝ փետրվարի առաջին տասնօրյակում արձանագրվել է ԿԲ-ում բանկերի թղթակցային հաշիվների միջոցների զգալի աճ (4.2 մլրդ դրամով):

Ստեղծված իրավիճակում, ելնելով իրացվելիության ավելցուկի օպտիմալ կառավարման խնդրից, ԿԲ-ն կիրառել է արժութային սվոփ գործիքը և ներքաշել ավելի քան 2.0 մլրդ դրամի իրացվելիություն: Միաժամանակ, բանկերը դիմել են մշտական հնարավորության ավանդային գործիքին՝ 8.8 մլրդ դրամ համախառն ծավալով (10 մլրդ դրամ մարման պարագայում), որից 1.7 մլրդ դրամը՝ տեղի է ունեցել ամսվա վերջին օրը՝ հարկերի հավաքագրման գործընթացի ազդեցության հետ մեկտեղ հանգեցնելով թղթակցային հաշիվների միջոցների, հետևաբար և փողի բազայի կտրուկ նվազման:

Փողի առաջարկի կրճատումը պայմանավորվել է բացառապես ՀՀ ԿԲ ՋԱԱ-ի նվազմամբ՝ 3.3 մլրդ դրամ, որի հիմնական մասը տեղի է ունեցել սվոփ գործիքի կիրառման ազդեցությամբ: Միաժամանակ, փետրվարին սպասարկվել է 916 մլն դրամին համարժեք արտաքին պարտք:

ԿԲ ՋՆԱ-ն աճել են 151 մլն դրամով՝ բացառապես ի հաշիվ զուտ այլ ակտիվների, այն դեպքում, երբ մյուս երկու բաղադրատարրերը՝ ԿԲ հանդեպ Կառավարության և բանկերի պարտավորությունները նվազել են 1.6 մլրդ դրամ ընդհանուր գումարով:

ԿԲ հանդեպ Կառավարության զուտ պարտավորությունների ցուցանիշի նվազողական վարքագիծը պայմանավորվել է ամսվա ընթացքում Կառավարության կողմից իրականացված հարկաբյուջետային քաղաքականության ավելցուկային ռեժիմով:

Ինչպես նախորդ ամիս, չնայած կիրառված ներքաշող գործիքների մեծ ծավալներին, փետրվարը ևս աչքի է ընկել բանկերի կողմից տնօրինվող իրացվելիության ավելցուկի բարձր մակարդակով՝ միջին ամսական 4.4 մլրդ դրամ՝ հունվարի 5.4 մլրդ դրամի փոխարեն: Ընդ որում, դա առավելապես ձևավորվել է ամսվա առաջին կեսին մեծ՝ 6.1 մլրդ դրամ ավելցուկի ազդեցությամբ, քանի որ երկրորդ կեսին, ԿԲ կողմից ներքաշող դրամավարկային գործիքների կիրառման արդյունքում, ավելցուկային իրացվելիության մակարդակն իջել է մինչև 2.9 մլրդ դրամ (փետրվարի 29-ի դրությամբ՝ 1.6 մլրդ դրամ):

Փողի զանգվածը (առանց կուտակված տոկոսների) փետրվարին աճել է 960 մլն դրամով և ամսվա վերջին կազմել 221.2 մլրդ դրամ՝ պայմանավորված բացառապես արտարժութային ավանդների աճով, այն դեպքում, երբ դրամային զանգվածը նվազել է ավելի քան 1.0 մլրդ դրամով (փետրվարի վերջին՝ 118.9 մլրդ դրամ): Վերջինիս կառուցվածքում 1.3 մլրդ դրամով նվազել են ժամկետային և 278 մլն դրամով՝ ցպահանջ ավանդները, որը 563 մլն դրամով չեզոքացվել է շրջանառությունում գտնվող կանխիկի աճով: Ինչ վերաբերում է արտարժութային ավանդների շարժին, ապա դրանք գրեթե հավասարաչափ են բաշխվել ցպահանջ և ժամկետային ավանդների միջև՝ համապատասխանաբար 855 մլն և 1.1 մլրդ դրամի աճ:

Փետրվարին, փողի ագրեգատների համեմատ փողի բազայի առաջանցիկ նվազման տեմպերի պայմաններում, դիտվել է փողի և դրամային բազմարկիչների աճ. փողի բազմարկիչը նախորդ ամսվա 2.14-ից դարձել է 2.21, իսկ դրամային բազմարկիչը՝ 1.16-ից 1.19:

Ֆինանսական շուկայում հիմնականում պահպանվել են նախորդ ամսվա նվազման միտումները, ինչն արտահայտվել է ՊՊ առաջնային շուկայում 9 - 12-ամսյա պարտատոմսերի միջին տարեկան եկամտաբերության 1.5 տոկոսային կետով նվազմամբ: Երկրորդային շուկայում դիտվել են ռեպո գործառնությունների և պետարժեթղթերի տոկոսադրույքների նվազման համեմատաբար դանդաղ տեմպեր՝ 0.6-ական տոկոսային կետով՝ համապատասխանաբար կազմելով 5.2% և 6.2%: Բավականին կայուն վարքագիծ են ցուցաբերել բանկերի կողմից ներգրավված և տեղաբաշխված միջոցների տոկոսադրույքները (ճեղքվածքը դեռևս բավականին մեծ է՝ 15.5%), սակայն դրանց կշռման արդյունքում միջին մեծությունը՝ բանկային տոկոսի հաշվարկային դրույքը իջել է 17%-ի: ՀՀ ԿԲ խորհուրդն անփոփոխ է թողել ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները. ռեպո համաձայնագրերինը՝ 7%, լոմբարդային վարկերինը՝ 20% և ավանդներինը՝ 3.5%:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա)

I. Իրական հատված

Ամվանում	*2004 թ. հունվար*	*2004 թ. հունվարի իրական աճի հնդեքսը 2003 թ. հունվարի նկատմամբ (%)*	*2004 թ. հունվար - փետրվար*	*2004 թ. հունվար - փետրվարի իրական աճի հնդեքսը 2003 թ. հունվար - փետրվարի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն ՀՀ դրամ)*	61100.7	104.4	134225.7	107.4
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	-	112.4	-	111.9
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար ՀՀ դրամ. աճողական)* [1,3]	55.8	104.8	122.7	107.4
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	33342.4	91.1	69329.5	94.5
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	603.4	102.3	1205.2	107.3
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն ՀՀ դրամ)*	12624.1	104.3	21934.6	105.8
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	44861.5	109.7	90279.5	109.5
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	2782.1	91.0	7858.6	95.8
Բնակչության դրամական եկամուտները *(մլն ՀՀ դրամ)*	63691.9	118.1[1]	141942.7	113.4[1]
Բնակչության դրամական ծախսերը *(մլն ՀՀ դրամ)*	76843.9	111.1[1]	154565.5	110.7[1]
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	35316.0	120.1[1]	35369[4]	119.2[1,4]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1212.7	-	1212.7	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	118.4	-	118.4	-
Գործազրկության մակարդակը (%)	9.8	-	9.8	-

II. Արտաքին հատված

Ամվանում	*2004 թ. հունվար* *(մլն ԱՄՆ դոլար)*	*2004 թ. հունվարը 2003 թ. հունվարի նկատմամբ (%)*	*2004 թ. հունվար - փետրվար* *(մլն ԱՄՆ դոլար)*	*2004 թ. հունվար-փետրվարը 2003 թ. հունվար-փետրվարի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	37.7	89.6	84.8	99.0
Ներմուծում *(ՍԻՖ)*	74.9	85.9	164.6	97.7
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	37.3	82.6	79.9	96.3

III. Գների ինդեքսներ

Ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	102.5	101.1	100.3	98.5
Փետրվար	99.4	105.2	97.9	101.0
2004 թ. հունվար – փետրվարը 2003 թ. հունվար - փետրվարի համեմատությամբ	107.0	130.8	101.7	99.6

IV. Սղաճ

Ժամանակաշրջան	*2002*	*2003*	*2004*	*2004*
	Նախորդ ամսվա նկատմամբ (%)			*Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	2.2	4.1	2.5	2.5
Փետրվար	-0.7	-1.5	-0.6	1.9
Մարտ	-0.6	-0.5		
Ապրիլ	2.5	2.0		
Մայիս	1.7	1.2		
Հունիս	-0.5	1.4		
Հուլիս	-5.0	-5.5		
Օգոստոս	-3.0	-2.3		
Սեպտեմբեր	-0.6	2.5		
Հոկտեմբեր	0.5	-0.1		
Նոյեմբեր	2.2	2.2		
Դեկտեմբեր	3.6	5.2		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	2.0	8.6		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	1.1	4.7		

V. Սպառողական գների փոփոխությունները [1]

Ցուցանիշներ	*Բնականոն սղաճ*		*Սեզոնային ապրանքներ*		*Պետ. կողմից կարգ. ծառ.*		*Սղաճ [2]*
	գների փոփոխությունը	ընթացիկ տարվա նկատմամբ (տոկոսային կետ)	գների փոփոխությունը	ընթացիկ տարվա նկատմամբ (տոկոսային կետ)	գների փոփոխությունը	ընթացիկ տարվա նկատմամբ (տոկոսային կետ)	նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
Հունվար	0.6	0.4	20.1	2.1	-0.1	0.0	2.5
Փետրվար	0.7	0.6	12.9	1.3	-0.1	0.0	1.9

[1] ՀՀ ԿԲ հաշվարկներով:
[2] Նշված երեք ընդլայնումների գումարը պետք է հավասար լինի վերջին սյունակում ներկայացված սղաճի ցուցանիշին:
[3] Հաշվարկներում կիրառվել է ՀՀ ԱՎԾ կողմից 2001 թ. մարդահամարի արդյունքների հիման վրա վերանայված զբաղվածների թվաքանակի ցուցանիշը:
[4] Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական գնահատումների:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]

(մլն ՀՀ դրամ)


Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ				Կառավարության ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[2]	Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[2,3]
	Կենտրոնական բանկի կարճաժամկետ պետական արժեթղթերի	Կենտրոնական բանկի միջնաժամկետ և երկարաժամկետ պետական արժեթղթերի	Այլ պետական արժեթղթերի	Ընդամենը	Կենտրոն. կառավ. հաշիվներ և ավանդներ դրամով	Կենտրոն. կառավ. հաշիվներ արտարժ.	ՇԻԳ-երի միջոցներ դրամով	ՇԻԳ-երի միջոցներ արտարժույթով	Ընդամենը		
2003											
Դեկտեմբեր	0	1047	0	1047	32357	156	41	0	32554	**-31507**	***-31800***
2004											
Հունվար	0	1047	0	1047	41597	156	3	0	41757	**-40710**	***-40804***
Փետրվար	0	1047	0	1047	42325	156	0	0	42481	**-41434**	***-41624***

[1] Ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[2] Կառավարության նկատմամբ պահանջների և Կառավարության ավանդների տարբերությունը:

[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:


Կառավարության զուտ պարտավորությունները Կենտրոնական բանկի նկատմամբ



ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ [1, 2]

(մլն ՀՀ դրամ)

Ժամկետ	Առևտրային բանկերի պարտավորությունները Կառավարության նկատմամբ[3]	Կառավարության ավանդները ԿԲ-ում[4]	Ընդամենը
2003			
Դեկտեմբեր	12279	32554	44833
2004			
Հունվար	12107	41757	53864
Փետրվար	12452	42481	54933



[1] Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ: Ներկայացված տվյալները հաշիվների մնացորդներն են ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

[2] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[3] Ընդգրկված են առևտրային բանկերի ցպահանջ և ժամկետային պարտավորությունները Գանձապետարանի նկատմամբ՝ բացառությամբ ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի նկատմամբ պարտավորությունների:

[4] Ընդգրկված են հանրապետական բյուջեի և ՏԻԳ-երի միջոցները:

ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 03	Հ – 04	Փ - 04
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)			
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1,2]	***153675***	***151496***	***148209***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-35089***	***-48377***	***-48226***
Կառավարություն	-31507	-40710	-41434
Կենտրոնական կառավարություն	-31507	-40710	-41434
Բանկեր	8600	4375	3487
այդ թվում՝ ռեպո համաձայն.	0	0	0
ավանդներ (-)	-100	-3300	-2150
Հակադարձ ռեպո (-)	0	-1025	-1031
Արժութային սվոպ (-)	0	0	-2032
Զուտ այլ ակտիվներ	-12182	-12042	-10279
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***116654***	***105172***	***101742***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***118586***	***103119***	***99983***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	96838	83686	84225
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	21047	18856	15243
Այլ հաշիվներ	700	577	515
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	657	517	493
Այլ հաշիվներ (արտարժույթով)	43	60	21
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)			
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-2179***	***-3287***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-13288***	***151***
Կառավարություն	-	-9203	-724
Կենտրոնական կառավարություն	-	-9203	-724
Բանկեր	-	-4225	-888
այդ թվում՝ ավանդներ (-)	-	3200	-1150
Զուտ այլ ակտիվներ	-	140	1763
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	**-**	***-11482***	***-3430***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	**-**	***-15467***	***-3136***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-13152	539
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	-	-2191	-3613
Այլ հաշիվներ	-	-123	-62
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	-	-140	-24
Այլ հաշիվներ (արտարժույթով)	-	17	-39
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)			
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-1.4***	***-2.2***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-37.9***	***0.3***
Կառավարություն	-	-29.2	-1.8
Բանկեր	-	-49.1	-20.3
Զուտ այլ ակտիվներ	-	1.1	14.6
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	**-**	***-9.8***	***-3.3***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	**-**	***-13.0***	***-3.0***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-13.6	0.6
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	-	-10.4	-19.2
Այլ հաշիվներ	-	-17.6	-10.7

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱԱ-ն ընդգրկում են փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[2] ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 566 ՀՀ դրամ, 1 ՀՓԻ = 1.4860 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.2407 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկի = 413.5 ԱՄՆ դոլար:

[3] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջին:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ [1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 03[3]	Հ – 04	Փ - 04
ՋԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**40586**	**43037**	**42114**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	97945	101612	107518
Արտաքին պարտավոր. փոխարկելի արտարժույթով	-54608	-55919	-62767
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով	-2750	-2656	-2637
ՋՆԱ	**100535**	**98225**	**99613**
Կառավարություն	16902	16184	16484
Ջուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	16607	18601	15809
Պահուստային ակտիվներ	25478	27360	24623
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-8870	-8759	-8814
Տնտեսություն	103218	101543	106737
Ձեռնարկություններ	61094	59714	62114
Դրամով	22875	23017	23412
Արտարժույթով	38183	36661	38666
Արժեթղթեր	37	37	37
Տնային տնտեսություններ	35384	35916	38297
Դրամով	7839	7836	8353
Արտարժույթով	27544	28079	29944
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	59	35	35
Դրամով	12	13	14
Արտարժույթով	47	23	21
Այլ ֆինանսական կազմակերպություններ	6645	5841	6254
Դրամով	2145	1752	1874
Արտարժույթով	4500	4090	4380
Այլ ռեզիդենտներ[2]	37	37	37
Դրամով	0	0	0
Արտարժույթով	37	37	37
Ջուտ այլ ակտիվներ	-36193	-38103	39417
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	3028	2784	2799
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժ.)	1974	12319	15827
Արտաքին պարտավոր. (ոչ փոխարկելի արտարժ.)	-412	-10571	-14553
Ներդրումներ փայաբաժիններում	514	501	501
Միջբանկային պահանջներ	3574	4793	4764
Այլ ակտիվներ	26558	27114	26839
Միջբանկային պարտավորություններ	-3544	-4654	-4660
Դրամական շուկայի գործիքներ	-562	-566	-
Կապիտալ հաշիվներ	-55148	-54195	-55428
Այլ պարտավորություններ	-12175	-15628	-15506
ԱՎԱՆԴՆԵՐ	**141121**	**141262**	**141727**
Դրամով ավանդներ	40756	40476	38928
Ցպահանջ ավանդներ	30618	26540	26298
Ժամկետային ավանդներ	10138	13936	12629
Ավանդներ արտարժույթով	100365	100785	102799
Ցպահանջ ավանդներ	51034	48978	49878
Ժամկետային ավանդներ	49331	51808	52922

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[2] Չդասակարգված պահանջներ: «Փողի զանգվածի կառուցվածքը» աղյուսակում սույն պահանջներն ընդգրկված են «Ձեռնարկություններ և կազմակերպություններ» տողում:

[3] Կատարվել է հաշիվների վերադասակարգում համապատասխան ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության նոր ձեռնարկի (2004 թ.), որի արդյունքում որոշ ցուցանիշներ տարբերվում են նախորդ հրապարակումներից:

ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 03[6]	Հ - 04	Փ - 04
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)			
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2]	***194261***	***194533***	***190323***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***39557***	***26434***	***31603***
Կառավարություն	-14605	-24525	-24950
Տնտեսություն	103257	101576	106777
Ձեռնարկ. և կազմակերպ.	61131	59751	62151
որից՝ կուտակված տոկոսներ	455	497	478
Տնային տնտեսություններ	35422	35949	38337
որից՝ կուտակված տոկոսներ	474	534	564
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	59	35	35
որից՝ կուտակված տոկոսներ	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	6645	5841	6254
որից՝ կուտակված տոկոսներ	71	43	58
Զուտ այլ ակտիվներ	-49095	-50617	-50224
ԴՐԱՄԱՅԻՆ ՁԱՆԳՎԱԾ [3]	***133230***	***119963***	***118916***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	***233198***	***220283***	***221244***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ [4]	***233818***	***220967***	***221926***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	91997	79128	79685
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [5]	31275	27057	26791
կուտակված տոկոսներ	17	16	28
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	10138	13936	12629
կուտակված տոկոսներ	163	142	163
Արտարժույթով ավանդներ	100408	100846	102820
Ցպահանջ[5]	51076	49038	49899
կուտակված տոկոսներ	5	6	12
Ժամկետային	49331	51808	52922
կուտակված տոկոսներ	435	520	480
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)			
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***272***	***-4210***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-13123***	***5169***
Կառավարություն	-	-9920	-425
Տնտեսություն	-	-1681	5201
Ձեռնարկ. և կազմակերպ.	-	-1380	2400
որից՝ կուտակված տոկոսներ	-	42	-19
Տնային տնտեսություններ	-	527	2388
որից՝ կուտակված տոկոսներ	-	60	30
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	-24	0
որից՝ կուտակված տոկոսներ	-	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	-804	413
որից՝ կուտակված տոկոսներ	-	-28	15
Զուտ այլ ակտիվներ	**-**	-1522	393
ԴՐԱՄԱՅԻՆ ՁԱՆԳՎԱԾ	**-**	***-13267***	***-1048***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	**-**	***-12915***	***961***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ	**-**	***-12851***	***959***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-12869	557
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-4218	-266
կուտակված տոկոսներ	-	-1	12
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	3798	-1307
կուտակված տոկոսներ	-	-21	21
Արտարժույթով ավանդներ	-	438	1974
Ցպահանջ	-	-2038	861
կուտակված տոկոսներ	-	1	6
Ժամկետային	-	2477	1114
կուտակված տոկոսներ	-	85	-40

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)			
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***0.1***	***-2.2***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-33.2***	***19.6***
Կառավարություն	-	-67.9	-1.7
Տնտեսություն	-	-1.6	5.1
Ձեռնարկ. և կազմակերպ.	-	- 2.3	4.0
Տնային տնտեսություններ	-	1.5	6.6
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	-40.7	0.7
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	-12.1	7.1
Զուտ այլ ակտիվներ	-	-3.1	0.8
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	-	***-10.0***	***-0.9***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	-	***-5.5***	***0.4***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	-	***-5.5***	***0.4***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-14.0	0.7
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-13.5	-1.0
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	37.5	-9.4
Արտարժույթով ավանդներ	-	0.4	2.0
Ցպահանջ	-	-4.0	1.8
Ժամկետային	-	5.0	2.1

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[2] ԶԱՀ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱՀ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 566 ՀՀ դրամ, 1 ՀՓԻ = 1.4860 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.2407 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկին = 413.5 ԱՄՆ դոլար:

[3] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (առանց կուտակված տոկոսների):

[4] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):

[5] Ընդգրկում են ռեզիդենտների հաշիվները և ցպահանջ ավանդները:

[6] Կատարվել է հաշիվների վերադասակարգում համապատասխան ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության նոր ձեռնարկի (2004 թ.), որի արդյունքում որոշ ցուցանիշներ տարբերվում են նախորդ հրապարակումներից:

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [1,2]

(մլն ՀՀ դրամ)

ժամկետ	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1 [4]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2 [5]	Արտարժույթով ավանդներ	M2X [6]
2003							
Դեկտեմբեր	91997	31258	123255	9975	133230	99967	233197
2004							
Հունվար	79128	27041	106169	13794	119963	100320	220283
Փետրվար	79685	26763	106449	12467	118916	102328	221244

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [1,3]

(մլն ՀՀ դրամ)

ժամկետ	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1 [4]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2 [5]	Արտարժույթով ավանդներ	M2X [6]
2003							
Դեկտեմբեր	91997	31275	123272	10138	133410	100408	233818
2004							
Հունվար	79128	27057	106185	13936	120121	100846	220967
Փետրվար	79685	26791	106476	12629	119106	102820	221926

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:


[2] Ավանդների մեջ կուտակված տոկոսները չեն ընդգրկված:


[3] Ավանդների մեջ կուտակված տոկոսները ընդգրկված են:


[4] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները):


[5] M2-ը դրամային զանգվածն է. ընդգրկում է M1-ը և դրամով ժամկետային ավանդները:


[6] M2X-ը փողի զանգվածն է. ընդգրկում է M2-ը և արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները):



Փողի բազան տատանումների թույլատրելի միջակայքում
մլն ՀՀ դրամ
122500
120000
117500
115000
112500
110000
107500
105000
102500
100000
05.01.04
09.01.04
12.01.04
14.01.04
16.01.04
20.01.04
22.01.04
26.01.04
29.01.04
31.01.04
03.02.04
05.02.04
09.02.04
11.02.04
13.02.04
17.02.04
19.02.04
23.02.04
25.02.04
27.02.04
Փողի բազա
Ծրագիր
Ծրագիր՝ +2%
Ծրագիր՝ -2%



Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
120000
105000
90000
75000
60000
45000
30000
01
02
03
04
Կանխիկ դրամ ԿԲ-ից դուրս
Պարտ. պահուստ. դրամով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
250000
200000
150000
100000
50000
0
01
02
03
04
Շրջանառությունում կանխիկ դրամ
Ցպահանջ ավանդներ
Ժամկետային ավանդներ
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
70
65
60
55
50
45
40
35
30
25
20
98
99
00
01
02
03
04


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
100
90
80
70
60
50
98
99
00
01
02
03
04


Փողի բազայի ամսական փոփոխությունը և ամսական սղաճը
%
30
25
20
15
10
5
0
-5
-10
-15
01
02
03
04
Փողի բազա
Սղաճ


Փողի զանգվածի ամսական փոփոխությունը և ամսական սղաճը
%
15
10
5
0
-5
-10
-15
01
02
03
04
Փողի զանգված
Սղաճ


ՍԵԶՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [1]

(մլն ՀՀ դրամ)

ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2003					
Դեկտեմբեր	106262	81040	111270	122636	221576
2004					
Հունվար	103077	77843	104826	118884	219461
Փետրվար	102977	81912	110603	122571	227609

[1] Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:
Հարթեցման մեթոդիկան նկարագրված է «ՀՀ կենտրոնական բանկի բանբերի» 2001 թ. 2-րդ եռամսյակի համարում հրապարակված «ՀՀ փողի ագրեգատների թվային շարքերի հարթեցումներ» նյութում:
Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են, քանի որ նոր տվյալների ի հայտ գալուն զուգահեռ, համապատասխան ամիսների սեզոնայնության գործակիցները փոխվում են: Այդ պատճառով «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում հրապարակվում են փողի ագրեգատների սեզոնայնորեն հարթեցված նոր շարքերը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակներ



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները




Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՁՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1,2]

(մլն ՀՀ դրամ)

Ցուցանիշներ	2003	2004	
	Դ [4]	Հ	Փ
Կենտրոնական բանկի ՁԱԱ	153675	151496	148209
Առևտրային բանկերի ՁԱԱ	40586	43037	42114
Ընդամենը	194261	194533	190323
Կենտրոնական բանկի ՁԱԱ [3]	***154559***	***152768***	***149532***



[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[2] ՁԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ՁԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով, առևտրային բանկերի ՁԱԱ-ն փաստացի փոխարժեքներով:

[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:

[4] Կատարվել է հաշիվների վերադասակարգում համապատասխան ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության նոր ձեռնարկի (2004 թ.), որի արդյունքում որոշ ցուցանիշներ տարբերվում են նախորդ հրապարակումներից:

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 03	Հ - 04	Փ - 04
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթ)	-651	-649	-656
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	97	82	90
Արտաքին պարտավորություններ փոխ. արտարժ.	-748	-731	-746
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով	-	-	-
ԶՆԱ	741	748	769
Կառավարություն	70	75	78
Ջուտ պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ	282	407	396
Պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ	282	417	396
Պարտավորություններ առևտրային բանկերի նկատմամբ	-	-9	-
Տնտեսություն	2453	2354	2260
Ձեռնարկություններ	1305	1190	1153
Դրամով	289	266	296
Արտարժույթով	1015	924	856
Արժեթղթեր	-	-	-
Տնային տնտեսություններ	1116	1132	1076
Դրամով	676	688	595
Արտարժույթով	440	444	481
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	33	32	31
Դրամով	-	-	-
Արտարժույթով	33	32	31
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	-	-
Դրամով	-	-	-
Արտարժույթով	-	-	-
Այլ ռեզիդենտներ	-	-	-
Դրամով	-	-	-
Արտարժույթով	-	-	-
Ջուտ այլ ակտիվներ	- 2064	-2089	-1965
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	8	-	4
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթ)	-	-	-
Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթ)	-	-	-
ՀՀ դրամ դրամարկղում	32	49	45
Ներդրումներ փայաբաժիններում	-	-	-
Պահանջներ վարկային կազմակերպություններին	-	-	-
Այլ ակտիվներ	520	508	513
Պարտավորություններ վարկային կազմակերպություններին	-	-	-
Դրամական շուկայի գործիքներ	-	-	-
Դրամաշնորհներ	-190	-11	-21
Կապիտալ հաշիվներ	-2205	-2388	-2276
Այլ պարտավորություններ	-229	-247	-230
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	91	99	113
Դրամով փոխառություններ	-	-	-
Ցպահանջ փոխառություններ	-	-	-
Ժամկետային փոխառություններ	-	-	-
Արտարժույթով փոխառություններ	91	99	113
Ցպահանջ փոխառություններ	-	-	-
Ժամկետային փոխառություններ	91	99	113

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ-03	Հ-04	Փ-04
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)			
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1]	***193610***	***193884***	***189666***
Զուտ արտաքին ակտիվներ (Կենտրոնական բանկ)	153675	151496	148209
Զուտ արտաքին ակտիվներ (առևտրային բանկեր)	40586	43037	42114
Զուտ արտաքին ակտիվներ (վարկային կազմ.)	-651	-649	-656
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***39984***	***26716***	***31931***
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը	**-14535**	**-24450**	**-24872**
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (Կենտրոնական բանկ)	-31507	-40710	-41434
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (առևտրային բանկեր)	16902	16184	16484
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (վարկային կազմ.)	70	75	78
Պահանջներ տնտեսությանը	**105710**	**103922**	109037
Պահանջներ տնտեսությանը (Կենտրոնական բանկ)	38	34	40
Պահանջներ տնտեսությանը (առևտրային բանկեր)	103218	101534	106737
Պահանջներ տնտեսությանը (վարկային կազմ.)	2453	2354	2260
Այլ ակտիվներ (զուտ)	**-51190**	**-52756**	**-52234**
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՐԱՑՎԵԼԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	***233594***	***220600***	***221597***
Ֆինանսական համակարգից դուրս կանխիկ ՀՀ դրամ	91965	79079	79640
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [2]	31080	26751	26555
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	10138	13936	12629
Արտարժույթով ավանդներ	100321	100734	102660
Վարկային կազմակերպությունների ներգրաված փոխառություններ	91	99	113
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)			
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1]	**-**	***274***	***-4218***
Զուտ արտաքին ակտիվներ (Կենտրոնական բանկ)	**-**	-2179	-3287
Զուտ արտաքին ակտիվներ (առևտրային բանկեր)	**-**	2451	-923
Զուտ արտաքին ակտիվներ (վարկային կազմ.)	-	2	-8
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-13268***	***5215***
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը	-	**-9915**	**-422**
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (Կենտրոնական բանկ)	-	-9202	-724
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (առևտրային բանկեր)	-	-718	300
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (վարկային կազմ.)	-	5	3
Պահանջներ տնտեսությանը	-	-1788	5116
Պահանջներ տնտեսությանը (Կենտրոնական բանկ)	-	**-4**	6
Պահանջներ տնտեսությանը (առևտրային բանկեր)	-	-1685	5204
Պահանջներ տնտեսությանը (վարկային կազմ.)	-	-99	-94
Այլ ակտիվներ (զուտ)	-	**-1566**	**522**
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՐԱՑՎԵԼԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	***-12995***	***997***
Ֆինանսական համակարգից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-12886	561
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [2]	-	-4329	-196
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	3798	-1307
Արտարժույթով ավանդներ	-	413	1926
Վարկային կազմակերպությունների ներգրաված փոխառություններ	-	8	14

[1] ԶԱՄ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱՄ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով, իսկ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ԶԱՄ-ն փաստացի փոխարժեքներով:
[2] Ընդգրկում են ռեզիդենտների հաշիվները և ցպահանջ ավանդները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ԱՄՆ դոլար)


Անվանումը	2003 [3]	2004	
	Դ	Հ	Փ
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*	503.7	499.3	489.6
Համախառն միջազգային պահուստներ	511.9	507.7	498.0
Ոսկի	0	0	0
ՀՓԻ ԱՄՀ-ում	6.5	18.8	13.7
Արտարժույթ [2]	505.4	489.0	484.3
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)* [4]	***505.8***	***501.7***	***492.2***

[1] *Հաշվարկված են փաստացի փոխարժեքներով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:*

[2] *Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*

[3] *Նախնական է, ներառված չեն ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*

[4] *Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:*



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

Ցուցանիշներ	2003[3]	2004	
	Դ	Հ	Փ
Վարկեր [1]			
Իրավաբանական անձանց			
ՀՀ դրամով	21.7	24.4	18.2
ԱՄՆ դոլարով	17.7	19.0	15.9
Ֆիզիկական անձանց			
ՀՀ դրամով	23.9	22.4	22.6
ԱՄՆ դոլարով	25.4	27.5	16.6
Ավանդներ [1]			
Իրավաբանական անձանցից			
ՀՀ դրամով	6.1	8.2	6.8
ԱՄՆ դոլարով	6.7	5.4	5.2
Ֆիզիկական անձանցից			
ՀՀ դրամով	6.5	8.6	3.9
ԱՄՆ դոլարով	6.1	5.2	4.3
ԿԲ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	7.0	7.0	7.0
ԿԲ-ում ՀՀ բանկերի ավանդների տոկոսադրույքը	3.5	3.5	3.5
ԿԲ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը	20.0	20.0	20.0
Պետական պարտատոմսերի եկամտաբերությունը [2]	9.7	7.5	6.4
Սղաճ	8.6	2.5	-0.6


[1] Ներկայացված են 90-օրյա վարկերի և ավանդների միջին կշռված տոկոսադրույքները:


[2] Ներկայացված է 9 – 12-ամսյա պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը:

[3] Ներկայացված են տարվա վերջին ամսվա տոկոսադրույքները: Սղաճը ներկայացված է նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ:

ՀՀ ԴՐԱՄ / ԱՄՆ ԴՈԼԱՐ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ - 03	Հ - 04	Փ - 04
1	566.17	-	-
2	566.55	-	565.47
3	566.55	-	565.31
4	566.34	-	565.31
5	566.53	568.48	564.54
6	-	-	564.37
7	-	568.48	-
8	566.53	569.07	-
9	566.53	568.96	564.45
10	568.01	-	564.71
11	567.71	-	564.44
12	567.34	569.78	564.25
13	-	569.74	563.84
14	-	569.55	-
15	566.90	568.94	-
16	566.74	569.66	563.61
17	566.12	-	563.61
18	565.79	-	563.52
19	565.21	570.00	563.94
20	-	568.98	564.07
21	-	568.67	-
22	563.88	568.35	-
23	562.16	568.11	564.07
24	561.52	-	564.45
25	562.00	-	564.23
26	562.83	567.82	564.60
27	562.83	567.47	564.32
28	562.83	-	564.32
29	563.27	566.25	-
30	566.00	566.04	-
31	-	566.04	-
ժամանակահատվածի վերջ	566.00	566.04	564.32
ժամանակահատվածի միջին	565.26	568.44	564.35





ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ[1]


ժամկետ		6 - 9 ամիս[2] (ներառյալ 273-օրյա)					
		Տեղաբաշխման ծավալը (մլն ՀՀ դրամ)	Միջին անվ. եկամտաբ. (%)	Նվազագույն տոկոսադրույքը	Առավելագույն տոկոսադրույքը	Ստանդարտ շեղումը	Իրական եկամտաբ.[3]
2003	Հունվար	600.0	14.9	14.9	14.9	0.0	22.4
	Փետրվար	1100.0	12.7	12.2	13.3	0.8	18.8
	Մայիս	600.0	14.0	14.0	14.0	0.0	10.3
	Օգոստոս	700.0	10.3	10.3	10.3	0.0	-3.6
